Գագարինավանի խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի հիշողության լանդշաֆտը


E60
Тбилиси
თბილისი
Рустави
რუსთავი
Гардабани
გარდაბანი
Акстафа
Ağstafa
Газах
Qazax
Иджеван
Իջևան
Гагарин
Раздан
Հրազդան
Гавар
Գավառ
оз. Севан
Սևանա լիճ
Мартуни
Մարտունի

Ավան, քաղաք, թե գյուղ

Աշխարհիս երեսին հազիվ թե գտնվի մի բնակավայր, որ կարգավիճակի առումով այնքան փոփոխությունների ենթարկված լինի, որքան Գագարինը:

Ծնունդ առնելով որպես Բանավան, հետո ավան, իր ծաղկուն շրջանում Գագարինը ուր որ է քաղաքի կարգավիճակ պետք է ձեռք բերեր:

Այսօր էլ, եթե գագարինցուն հարցնես, թե ինչ կարգավիճակում է իր բնակավայրը, անորոշության մեջ կընկնի, թեև կա Ազգային ժողովի 1995թ որոշումը, ըստ որի, Գագարինը գյուղի կարգավիճակով մտնում է Սևանի համայնքի մեջ:

-Ես չգիտեմ, թե ինչ է Գագարինը, գյուղ, թե մեկ այլ բան,- ասում է քաղաքապետարանի Գագարինի տարածքային բաժնի վարիչ Կառլեն Առաքելյանը և ավելացնում,- բայց որ գագարինցուն ապրելու հնարավորություն պետք է տալ, դա օրվա գերխնդիր է:

Դժվար չէ չհասկանալ բնակավայրի հոգսերով, դարդ ու ցավով ապրող այս մարդուն: Գագարինն այսօր հոգեվարքի մեջ է: Նախկինում այստեղ 2500 աշխատող կար, ասել է, թե այդքան մարդ ապահովված էր աշխատանքով և կայուն աշխատավարձով: Իսկ այսո՞ր: Նախկին 2200 բնակչից Գագարինում մնացել է հազիվ 1500-ը: 80 ընտանիք լքել է ավանը և ապրելու հույս է որոնում ռուսաստաններում:

Ինքներդ դատեք, անցած տարի այստեղ արձանագրվել է ընդհամենը... 3-4 ծնունդ, 5 հարսանիք: Իսկ նախկինում, ինչպես Կառլեն Առաքելյանը վկայեց, հանգստյան օրերին ավանում դհոլ-զուռնայի ձայնն անպակաս էր:

Այսօր գագարինցու ապրելու միակ հույսը, եկամտի միակ աղբյուրը մնացել է անասնապահությունը: Շուրջ 250 գլուխ խոշոր և 150 գլուխ մանր եղջերավոր անասուն են պահում Գագարինում: Սակայն հե՞շտ է անասնապահությամբ զբաղվել, եթե գյուղ կոչվածը սեփական հողակտորներ չունի, եթե գյուղացի կոչվող գագարինցին իր հողը չունի:-Եթե գյուղացի ենք, ապա ու՞ր է մեր հողը, եթե քաղաքացի ենք, ապա որո՞նք են մեր իրավունքները,- սրտնեղեց մի ծերունի:Սա անառարկելի ճշմարտություն է, որից դուրս գալու ելքը առայժմ մշուշոտ է: Թեև քաղաքապետարանի անդուլ ջանքերի շնորհիվ գագարինցիներին վարձակալությամբ հողեր են տրվել հարևան համայնքի հողակտորներից, բայց միթե՞ դա բավարար է:

Առաջին գազարինավանցիներն են

Հոբելյանական տարվա սոցիալիստական մրցությունը լավագույն արդյունքներ բերեց նաև շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվներին, որոնք տնտեսական տարվա 4-րդ եռամսյակը նշանավորեցին համախառն արտադրանքի թողարկման և իրացման պլանների զգալի գերակատարմամբ:Նկատելիորեն բարելավվեցին նաև տեխնիկա-տնտեսական մյուս ցուցանիշները:

Ամփոփելով մրցության արդյունքները, շրջանային ժյուրին նշեց հատկապես Գազարինավանի տոնածառի զարդարանքների գործարանի հաջողությունները: Գործարանի կոլեկտիվը ուշագրավ աշխատանք է կատարել նաև նոր տեխնիկայի ու առաջավոր տեխնոլոգիայի ներդրման, նորարարական ու ռացիոնալիզատորական առաջարկությունների արմատավորման ասպարեզում:

Արդյունաբերական ձեռնարկությունների միջև ծավալված սոցիալիստական մրցությունում ժյուրին 1970 թվականի չորրորդ եռամսյակի հաղթող ճանաչեց Գազարինավանի տոնածառի զարդարանքների գործարանին (դիրեկտոր՝ Ս. Կարապետյան, կուսկազմակերպության քարտուղար՝ Մ. Հակոբյան): Գործարանին հանձնվեց <<Առաջավոր ձեռնարկությանը>> փոխանցիկ դրոշը:

Ժյուրին մրցանակային երկրորդ տեղը հատկացրեց Արևելյան էլցանցի կոլեկտիվին (պետ՝ Լ. Խաչատրյան, կուսկազմակերպության քարտուղար՝ Ժ. Բադալյան):

Մրցանակային երրորդ տեղը տրվեց գործադիր սարքերի գործարանի կոլեկտիվին (դիրեկտոր՝ Հ. Խաչատրյան, կուսկազմակերպության քարտուղար Ժ. Գրիգորյան):

Սոցմրցությամբ ստանձնած պարտավորությունները հաջողությամբ կատարելու համար ժյուրին նշեց նաև ձուկկոմբինատի, քարհանքվարչության և ապակե էլեկտրամեկուսիչների գործարանի կոլեկտիվների դրական աշխատանքը:

Բնակավայրի հիմնադրումը

Հետպատերազմյան տարիներին հանրապետությունում արագ զարգացող արդյունաբերության էլեկտրաէներգիայի պահանջները բավարարելու, ինչպես նաև Արարատյան դաշտի հողերը ոռոգելու նպատակով որոշվեց օգտագործել Սևանա լճի դարավոր պաշարները: Կառուցվեցին Սևան-Հրազդան կասկադի ՋՐԷԿ-երը: 1954-1959թթ կառուցվում էր Աթարբեկյանի հիդրոկայանը: Սևան-Հրազդան թունելի ելքի միջև Հրազդանի ջրամբարը կառուցվում էր 15,1 կմ երկարությամբ 2 թունել և 9 բաց ջրանցք: Առաջին ջրանցքի և թունելի գլխամասի շինարարությունը անցնում էր Գեղամավանի տարածքով:

Նախագծված էր բանվորների համար կառուցել ժամանակավորապես օգտագործման համար կացարաններ՝ /բարաքներ/ , նախագծային 12 մլն ռուբլի արժողությամբ:

Սակայն Մինիստրների խորհրդի նախագահ Անտոն Երվանդի Քոչինյանը տեղում ուսումնասիրելով կառուցվող կացարանների նախագծերը, այն քննության է ենթարկվում Մինիստրների խորհրդում և հատկացվող գումարը չփոշիացնելու նպատակով առաջարկվում է այսօրվա ավանի տարածքում կառուցել եռկիարկանի բնակելի շենքեր , կուլտուր-կենցաղային օբյեկտներ, թվով 8 կառույց:

1954 թվականի գարնանը նախագիծը ուժ ստացավ: Նախագծվում էր կառուցել 25 երկիարկանի մեկ և երկու մուտքերով 8 և 12 բնակարանոց, մեկից երեք սենյականոց կոմունալ բոլոր հարմարություններով բնակարաններ:

Չէր մոռացված կուլտուր-կենցաղային առևտրի օբյեկտների՝ դպրոցի, մսուր մանկապարտեզի, կուլտուրայի տան, խանութի, երկաթուղային կայանի շենքերի կառուցումը:

Բնակավայրի կառուցման համար կառավարությունը Գեղամավանի կոլտնտեսության ,,Աթոի զոլեր,, հանդամասից հատկացրեց 10 հա տարածքը:

Աթարբեկյան ՋՐԷԿ-ի շինարարները ապրիլի 25-ին փորեցին ներկայիս Գայի փողոցի թիվ 6 շենքի 12 բնակարանոց շենքի հիմքը:Ճշերից փոփոռալից շամպայնի շիթերը ուղղեցին հողափոր էքսկավատորավարի վրա : Ցնծություն էր: Դրվեց ապագա ավանի հիմքը: Արարողությանը մասնակցում էին հայէներգոշինի կառավարիչ Վազրիկ Միխայլիչ Սեկոյանը, Հրազդանի Սևանի շրջկոմների, շրջգործկոմների ղեկավարները, Սջանշինի պես Աշոտ Մովսիսյանը, գլխավոր ինժեներ Նիկոլայ Տիդենը, Սևան-Հրազդան կասկադի ղեկավարներ, բանվոր ծառայողներ:

1954-1961 թվերին արագ կառուցվում էր նախագծով նախատեսված բնակելի շենքերը, կուլտուր-կենցաղային օբյեկտները:

Առաջինը շահագործման հանձնվեց 12 բնակարանոց թիվ 6 շենքը: Առաջինը բնակարան ստացան թունելագործները՝ Վանուշ Սաղաթելյանը, Պավլիկ Սարգսյանը, Ռազմիկ Գաբրիելյանը, Անուշավան Սահակյանը, և էլի 8 բնակիչներ:

Հրազդանշինը, որը ստանձնել էր Աթարբեկյանի ՋՐԷԿ-ի ղեկավարությունը, նորաստեղծ ավանին պայմանականորեն տվեց ,,Երկրորդ,, Բանավան անունը:

Դեռ կգան գարուններ

Մարդը նվաճում է տիեզերքը: Աշխարհը քարացած է: Աշխարհը զարմացած է Յուրի Գագարինի սխրանքով: Հիրավի, վիթխարի նվաճում ու անասելի հեղինակություն սովետների երկրին:

1961թ ապրիլի 12 մարդը թռչում է տիեզերք ու Խորհրդային Միության հեռավոր մի անկյունում, աշխարհից կտրված ու աշխարհի անծանոթ մի հողակտորում նրա անունով բնակավայր է անվանակոչվում: Բանավանը ցնծության մեջ է, հայ մարդը բերկրանքի մեջ է մեծ վստահություն կոչվելու տիեզերքը նվաճած մարդու անունով:

Հետո կգլորվեն օրն ու ժամը, պատմություն կդառնա մեր ապրած ամեն վայրկյանը, կփոխվեն ժամանակները: Բայց անունն այս ամուր կկպչի բնակավայրին: Այնքան ամուր, որ նույնիսկ խառնակ ժամանակներում, երբ շատ գյուղեր և քաղաքներ անվանափոխվեցին ժամանակին ու տեղանքին համահունչ, Գագարին անունը մնաց ու մնաց: Կմնա, քանզի գագարինցին հպարտ է, որ իր գյուղն առաջին տիեզերագնացի անունով է կոչվում:

1961 ապրիլի 12-ին աշխարհի բոլոր ռադիոկայանները ցնցող լուր հաղորդեցին <<Մարդը տիեզերքում է>>, <<Գագարինը տիեզերքում է>>:

Բանավանի բնակչությունը, տեղի կազմակերպությունները, որոշում ընդունեցին խնդրել Սևանի կուսշրջկոմին, շրջգործկոմին իրենց բնակավայրը կոչել Յուրի Գագարինի անվամբ: Շրջանի ղեկավարությունը հարգեց միջնորդությունը:

1961թ. ապրիլի 26-ին ՀՍՍՌ Գերագույն խորհրդի հրամանագրով որոշվեց:

Բավարարել Սևանի շրջանի շրջանային կազմակերպությունների միջնորդությունը և նորաստեղծ բնակավայրը անվանել Գագարին ավան:

Գագարին ավանը դասել ՀՍՍՌ քաղաքատիպ ավանների կատեգորիային:

Գագարին ավանում կազմել աշխատավորների ավանային սովետ:

Ավանային սովետի գործկոմի առաջին նախագահ ընտրվեց Բելո Արշակի Խաչատրյանը: Հետագա տարիներին նախագահներ աշխատեցին Ք. Անտոնյանը, Հռ. Սիրիբյանը, Հ. Անդրեասյանը, Ռ. Մելիքյանը:

Բնակավայրի կազմավորումը

Բնակիչների հետ զրույցում նկատվում է քաղաքի հիմնադրման ու այդ գործում իրենց մասնակցությունը ունենալու հանգամանքի կարևորումը, ինչը սովորաբար հատուկ է նոր ստեղծվող քաղաքների ինքնության համատեքստում, քանի որ բնակիչները իրենք էլ դառնում են քաղաքը «ստեղծողները»: Բանն այն է, որ առաջին բնակիչները տեղափոխվել են այստեղ գործարանների կառուցմանը զուգահեռ, և բնակավայրը ի սկզբանե ստեղծվել է արդյունաբերական կենտրոն դառնալու նպատակով: Նոր բնակիչներն էլ իրենց բնակարանները ստացել են այս կամ այն գործարանի կողմից, որոնք ընդունված կարգի համաձայն, կառուցում էին բնակարաններ և իրենց աշխատակիցներին ապահովում դրանցով:

Բնակավայրը ձևավորվել է տարբեր տեղերից այստեղ գաղթած մարդկանցից, ովքեր ունեն իրենց նախկին «հայրենիքի» մասին հիշողություններ և այդ բնակավայրերի հետ մինչ այժմ էլ կապված են ազգակցական կապերով: Բայց, ի տարբերություն այդ գյուղերի, Գագարինի բնակիչների համար, որպես ծագման վայր, արդեն, ոչ թե նշվում է Մակուից կամ մեկ այլ վայրից գաղթած լինելը, այլ տարբեր գյուղերից ու քաղաքներից իրենց կամ ծնողների եկած լինելը: Այդ պատճառով կախված զրուցակցից տեղացիները ինքնաներկայանում են որպես սևանցի, գագարինցի, իսկ երբեմն էլ իրենց ինքնությունը կապում են այն գյուղերի հետ, որտեղից տեղափոխվել են այստեղ բնակվելու: Այս առումով, եթե հնաբնակների մոտ տեղական բարբառները պահպանվել են, ապա այստեղ ծնվածները մեկ ընդհանուր բարբառով են խոսում, որը, ինչպես իրենք են ասում, ավելի նման է Սևանի բարբառին:

Բնակավայրի անվան կապը տիեզերագնացության, խորհրդային անցյալի հետ հաճախ եղել է և դեռ մնում է համայնքային միջոցառումների հիմնական թեման: Հատկանշական է, որ հիմնադրման 60-ամյակի միջոցառումների ժամանակ աշակերտները ռուսերեն բանաստեղծություններ են արտասանում Գագարինի և տիեզերքի մասին, ինչպես նաև այստեղ պարբերաբար նշվել է տիեզերագնացի օրը: Սովորական շարադրություններից բացի, ամեն տարի ռուսաց լեզվի դասերին երեխաներն այստեղ հանձնարարում են նաև «Յուրի Ալեքսեևիչ Գագարինի կյանքի ու սխրագործության մասին» վերնագրով շարադրություն գրել: Դպրոցի պատին էլ փակցված են Գագարինի մասին պատմող պատի թերթեր ևն: Թեև փաստական տվյալներ չկան, բայց տեղացիների շրջանում տարբեր խոսակցություններ են պտտվում այն մասին, որ Գագարին են եկել պատվավոր հյուրեր, որոնց թվում նշվում են Գագարինի թոռի այցելությունը, մեկ այլ տեղական լեգենդի համաձայն էլ նրա աղջիկը անցած տարի եկել է արձանի բացմանը մասնակցել.«Գագարինի աղջիկը դաժե անցած տարի, նախանցած տարի եկել ա իրա հոր արձանին ըստեղ, բացում ա արել»՝ «Վալենտինան մեկ էլ Յուրի Գագարինը»:

Անվանը համապատասխան այստեղ հավանաբար 60-ականներին տեղադրվել է Գագարինին նվիրված հուշակոթողը, որը քաղաքային տարածքի առանցքային խորհրդանշական կետերից է: Այս արձանի մոտ են անցկացվել շքերթներ և քաղաքային այլ միջոցառումներ: Սակայն անվանումը, որ «տիեզերք նվաճելու» զարգացման գաղափարին է հղում անում, մի հոդվածում հակադրության մեջ է դնում ներկայիս բնակավայրի լքված ու աղքատիկ վիճակի հետ. «Սևանա լճի մոտ գտնվող գյուղը մինչև օրս կոչվում է Գագարինի անունով: Իսկ տիեզերագնացության օրը գյուղը դիմավորում է ժանգոտ գործարանային դարպասներով»:

«Քրջոտ» խաչ Ամենահին սրբատեղին համարվում է գերեզմանոցի մոտ գտնվող «Քրջոտ խաչ» կոչվող 13- րդ դարի խաչքարը: Տեղացիները սրբավայրի անվանումը բացատրում են այն հանգամանքով, որ խաչքարի շուրջ հաճախ սովորության համաձայն տարբեր կտորներ, ժապավեններ են կապել ցանկություններ պահելով (ի միջի այլոց նույն անվամբ խաչքար կա նաև Դդմաշեն և Ծաղկունք գյուղերի միջև): Գերեզմանը սկսում է ավելի ուշ ձևավորվել հենց այս խաչքարի շուրջը, քանի որ մինչ այդ մարդիկ թաղումները արել են այն գյուղերի գերեզմանոցներում, որտեղից իրենք տեղափոխվել են: Սրբազան և հիշողության լանդշավտը կազմող կառույցներից բնակիչները նշում են նորակառույց եկեղեցին, «Արցախյան հերոսամարտի նահատակների» հիշատակին նվիրված խաչքարը:

Ս. Խաչ եկեղեցին Քանի որ «Քրջոտ խաչը» եղել է գերեզմանի մոտ, որոշել են նոր եկեղեցին կառուցել մեկ այլ տեղում՝ գյուղի սկզբնամասում: Եկեղեցին նորակառույց է, փոքր ծավալով: Կառուցվել է արմատներով Գազարինից ռուսաստանաբնակ Դավիթը Գալստյանի ֆինանսավորմամբ: Այն դեռ օծված չէ. շինարարական աշխատանքները ավարտի փուլում են: Տեղը նախկինում լքված է եղել, որոշ ծառեր ու ծաղիկներ են եղել:

Արձանը

Բնակավայրի հիմնական խորհրդանիշը ԽՍՀՄ առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինին նվիրված հուշակոթողն է, որը ուղղակիորեն կապված է բնակավայրի անվան հետ: Այս հուշակոթողը քաղաքի կենտրոնական հատվածում դոմինանտող տեղ է զբաղեցնում և հիմնական համայնքային միջոցառումները անցկացվում են արձանի մոտ կամ դրա հակադիր մասում գտնվող մշակույթի տան շենքի դիմաց: Տարածքը մինչև վերջերս անխնամ վիճակում էր: Վերջերս է բարեկարգվել համայնքային ծրագրի շրջանակներում. «Յուրի Գագարինի արձանն էլ, որ կա ըտեղ էլ էլի շատ անտանելի վիճակ էր, մշակեցինք, զաբոռները կռասկեցինք, ամրացրեցինք»: Արձանի հարևանությամբ եղել է սրճարան, որը վաղուց փակվել է:

Այգին

Գագարինի հիմնական հանրային վայրն այգին, որը ձգվում է բնակավայրի կենտրոնով այն բաժանելով երկու մասի, իսկ վերջում մշակույթի տունն է: Այգին այստեղի երեխաների հիմնական խաղահրապարակն է: Այգում է տեղադրված «Արցախյան հերոսամարտի նահատակների» հիշատակին նվիրված խաչքարը:

Մշակույթի տուն

Երբեմնի ադմինիստրատիվ շենքը, որը մշակույթի տուն է եղել, ներկայումս վերանորոգման մեջ է: Շենքի առաջին հարկը ծառայում է որպես խաղասրահ, իսկ երկրորդ հարկը՝ արարողությունների սրահ: Նախկինում այս շենքում է եղել նաև գրադարանը, որը տեղափոխվել է երաժշտական դպրոցի շենք: Այն սպասքով ու գույքով համալրվել է բարերարների կողմից և ծառայելու է որպես արարողությունների սրահ (սգո և ուրախության): Այստեղ է նաև Գագարինի պատասխանատուի գրասենյակը: Այս շենքը Գագարինի կենտրոնական հրապարակի դոմինանտող կառույցն է, և դա է պատճառը, որ այստեղ է դրվում նաև ամանորյա տոնածառը:

Դպրոցը վարչական կենտրոնի բացակայության պայմաններում կարևոր ինստիտուցիայի դեր է կատարում: Շատ միջոցառումներ կազմակերպվում են դպրոցի կազմակերպչական ռեսուրսներով:

Կապը այլ համայնքների հետ

Գագարինի հին բնակիչները պնդում են, որ սկզբում ավելի սերտ էր կապը Հրազդանի հետ, քանի որ նոր ստեղծվող բնակավայրի շինարարական աշխատանքները Հրազդանի կողմից էր արվում, օրինակ երկհարկանի շենքերի կառուցումը: 1974-75 թվերից կապը Սևանի հետ ավելի է ակտիվանում, բայց առևտրական կապը Հրազդանի հետ ավելի սերտ է մնում: Գյուղերից ավելի սերտ է կապը Գեղամավանի, Ծաղկունքի, Դդմաշենի հետ:

Այս պահին Գագարինի բնակիչների հիմնական կապը Սևան քաղաքի հետ է, որի թաղամասն էլ այն համարվում է: 08:30-ից ժամը մեկ դեպի Սևան գործում է հանրային տրանսպորտ: Նախկինում, երբ գնացքն է գործել, կապը Սևանի և Երևանի հետ ավելի ակտիվ է եղել գնացքի միջոցով: Սևանի հետ Գագարինը նաև կապված է ադմինիստրատիվ և առևտրային կապով: Թեև շատ հարցերով բնակիչները Գագարինի պատասխանատուի միջոցով են կապվում քաղաքապետարանի հետ, բայց շատ դեպքերում էլ անձամբ են գնում Սևան: Որոշ հաստատություններ պահանջարկի քիչ լինելու պատճառով Գագարինում փակվում են կամ դադարում են շահութաբեր լինել տեղում, քանի որ շատերը Սևանից են օգտվում: Օրինակ՝ երաժշտական դպրոցը, որը յոթ-ութ տարի առաջ գործել է Գագարինում (դաշնամուր, կլառնետ, դհոլ, քանոն առարկաներով), փակվել է, քանի որ, 20-30 երեխայի պահանջարկ կա, որոնք նախընտրում են տարբեր երաժշտական գործիքների դասերի գնալ, իսկ այդ պարագայում վարձավճարները չեն բավականացնում տարբեր գործիքների մասնագետներ ունենալ, ուստի քաղաքապետը առաջարկել է հաճախել Սևան քաղաքի երաժշտական դպրոց՝ օպտիմալացնելով Գագարինում եղածը: Բժշկական կետում էլ առաջին բուժ. օգնություն ցուցաբերող երեք բուժաշխատողներ կան, ովքեր Գագարինի երաժշտական դպրոցի առաջին հարկի նոր վերանորոգված սենյակում են լինում, բայց իրենք ևս համարվում են Սևանի պոլիկլինիկայի աշխատողներ: Ժամանցի վայրեր այստեղ ևս չկան, որը էլի պայմանավորված է պահանջարկի քիչ լինելով և եղածն էլ Սևանի ենթակառուցվածքներից օգտվելու հանգամանքով:

Տրանսպորտային կապը

Ժամանակին, երբ գնացքը ակտիվ գործել է, տարբեր տվյալներով օրվա մեջ երեքից-չորս, կամ տասն անգամ կանգառ է կատարել Գազարինի «Ծաղկունք» կայարանում: Զրուցակիցս պնդում էր, որ նույնիսկ գնացքում կանգնելու տեղ չէր լինում:

Հետագա ուսումնասիրությունների թեմաներ

-Առանձին ուսումնասիրության թեմա է այս բնակավայրի արդյունաբերականացման պատմությունը բանավոր պատմության մեթոդով, դրա արդյունքում բնակավայրի զարգացման հայեցակարգի մշակումը եղած տեղական մշակույթի հիման վրա, ինչպես նաև եղած արդյունաբերական շինությունների հաշվառումը, դրանց հետագա օգտագործման նպատակով կիրառության հնարավորությունները:

Առաջարկներ-խնդիրներ

-Իմ դիտարկմամբ բնակավայրի տարածքը շատ հարմար է հեծանվային տրանսպորտի զարգացման համար, կարելի է նաև դիտարկել հարակից բնակավայրերի հետ հեծանվի համար նախատեսված ճանապարհների կառուցման հնարավորությունները:

-Քանի որ մի քանի բնակավայրում կա կոյուղու խնդիր, հավանաբար ընդհանուր կոյուղու ցանցի ստեղծման կարիք կլին:

Գազարին բնակավայրի տեղային ինքնության ընդհանուր պատկերը
Մեթոդաբանություն
Ներկայացվող նյութը նախնական հետազոտության արդյունք է: Արվել է դաշտային ազգագրական նյութի հիման վրա, որը ներառում է մի քանի աղբյուրներ. հարցազրույցներ տեղի բնակիչների, այդ թվում համայնքի ղեկավարի հետ, բնակավայրի տարածքի, առօրիայի կարճ դիտարկումներ (ընդհանուր առմամբ երկու օրերում արված մի քանի ժամյա դաշտային աշխատանքի ընթացքում), մեդիա նյութեր, ԳԱԱ ՀԱԻ արխիվում պահվող Գ. Ստեփանյանի «Սևանի շրջանի ազգագրական նյութերը» (1976թ.), բառարանային և հանրամատչելի այլ աղբյուրներ: Նյութում եղած հրապարակային աղբյուրները ներկայացված են համապատասխան հղումներով, իսկ բանասացների խոսքին անվանական հղումներ արված չեն նպատակադրված՝ հաշվի առնելով փոքր համայնքների հետ աշխատելու մարդաբանական հետազոտությունների էթնիկական որոշ հարցեր: Քանի որ նյութը հանրայնացման ենթակա չէ և իր նախնական, մակերեսային դիտարկումների առումով չի հանդիսանում հավաստի վերլուծական տեքստ, այն կարելի է օգտագործել զուտ շատ ընդհանրացված դիտարկումների հետ ծանոթանալու նպատակով:

Բնակավայրի հիմնադրման որոշումը, դրա նախագծման հետ կապված հարցերը առանձին արխիվային հետազոտություն են պահանջում, այդ պատճառով այստեղ ներկայացված են հիմնականում զրուցակիցների կողմից ինձ տրամադրած տեղեկությունները: Տեղային ինքնության «բարդությունները» Գագարինի մասին այս կարճ ճանաչողական հետազոտությունը ցույց է տալիս, որ այստեղի բնակիչների մոտ նկատվում է տեղային բարդ ինքնության երևույթ, որը այս դեպքում բնորոշվում է տեղի հետ բնակիչների նույնականացման բազմազան ընկալումներով և բնակավայրի կարգավիճակի ընկալման և այն բնորոշելու անորոշությամբ: Դա արտահայտվում է լիմինալությամբ, որը դրսևորվում է, ինչպես բնակավայրի «քաղաքից» «գյուղ» կարգավիճակի անցմամբ, այնպես էլ խորհրդային (արդյունաբերական) և հետխորհրդային (հետարդյունաբերական) շրջանի անցումով: Քանի որ այս երկու անցումներն էլ համաժամանակ են տեղի ունեցել, հաճախ զրուցակիցներիս մոտ դրանք արտահայտվում են մեկը մյուսով պայմանավորելով: Բնակավայրի կարգավիճակը (գյո՞ւղ, քաղա՞ք, ավա՞ն, թաղամա՞ս...) Գագարինը գտնվում է Հրազդան գետի ձախափնյակում, Սևան քաղաքից 9 կմ արմ.՝ Երևան-Սևան երկաթուղու վրա, ավտոմայրուղու ձախ կողմում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1979թ. ուներ 953, 1989-ին՝ 1643, 1991-ին՝ 1400, 2001- ին՝1498 բնակիչ: Ներկայումս Գագարինի բնակչությունը ըստ մեր բանասացի Սևանից բացի մոտ 1700 մարդ է, 400-ից ավել տնտեսությամբ:

Երբ արդեն բավականին թվով տներ էին կառուցել, այստեղով անցավ Երևան-Սևան երկաթգիծը: Կառուցեցին կայարան, այն անվանելով Ծաղկունք կայարան: 1961թ.-ից մինչև 04.12.1995թ. համարվել է Սևանի շրջանի քտա (քաղաքատիպ ավան) և կոչվել է Գագարինավան: Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ, երբ Սևանը դարձավ ինքնուրույն համայնք, իր վարչատարածքային միավորում ներառվեց Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը և Գագարին գյուղը թաղամասի կարգավիճակով: Երբ արդեն բավականին թվով տներ էին կառուցել, այստեղով անցավ Երևան-Սևան երկաթգիծը: Կառուցեցին կայարան, այն անվանելով Ծաղկունք կայարան: 1961թ.-ից մինչև 04.12.1995թ. համարվել է Սևանի շրջանի քտա (քաղաքատիպ ավան) և կոչվել է Գագարինավան: Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ, երբ Սևանը դարձավ ինքնուրույն համայնք, իր վարչատարածքային միավորում ներառվեց Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը և Գագարին գյուղը թաղամասի կարգավիճակով:

Գագարինում տարբեր տվյալներով գործել են 15-17 գործարաններ: Իմ բոլոր զրուցակիցները փորձում են մտաբերել դրանք այն ձևով, որով ընդունված էր անվանել դրանք առօրյայում. «Խռուստալի զավոդը», «լուսատեխնիկականը», «ջրերը», «գառաժները», «էքսկավատորների ռեմոնտը», «խալադելնիկը», «ճտանոցը», «Արամովիչի պահեստները», «նավտոբազան», «սովխոզ տեխնիկան», «սվյազը», «գազամուղը», «ավտոբազան», «քոչանոցը»: Ժամանակին Գագարինում են աշխատել նաև շրջակա գյուղերի բնակիչները և ըստ էության այն յուրատեսակ կենտրոնի դեր է խաղացել շրջակա բնակավայրերի համար: Այս կամ այն գործարանում աշխատած լինելու փաստը հետարդյունաբերական շրջանում այնքան կարևոր խորհրդանշական իմաստ է ստացել բնակիչների անձնական կենսագրության մեջ, որ մինչև հիմա իրենք հիշում են իրար ըստ այդ հանգամանքի:

Հետխորհրդային շրջանում ցանցային տնտեսության փլուզմամբ և պետական գույքի մասնավորեցմամբ աստիճանաբար փլուզվեց երկրի գրեթե ողջ արդյունաբերությունը: Գագարինը, որն արդյունաբերության շուրջ էր ձևավորվել և բնակեցվել էր բացառապես այստեղ հիմնված գործարանների աշխատակիցներով, խորհրդային միության փլուզումից հետո, չունենալով գյուղատնտեսական ավանդույթներ և համայնքապատկան գյուղատնտեսական նշանակության հողեր, անմիջապես ամայացավ, իսկ բնակիչներն էլ կանգնեցին տնտեսական մեծ դժվարությունների առջև: Բնակիչներից շատերը հեռացան, կամ սկսեցին մեկնել արտագնա աշխատանքի, քանի որ իրենց մասնագիտությունը կորցրել էր երբեմնի արդիականությունը, ինչպես նաև պլանային տնտեսաձևից մասնավորին անցնելու և այլ ոլորտում ադապտացվելու հնարավորություններ կա՛մ չկային, կա՛մ քիչ էին և ոչ շահութաբեր: Գագարինում արդյունաբերության փլուզումից հետո առաջացած ծանր տնտեսական և աշխատանքային պայմանները մարդկանց ստիպում են լցվել նոստալգիայի զգացումով դեպի խորհրդային անցյալը, քննադատել ներկա վիճակն ու բացառել ապագայի նկատմամբ լավատեսական հույսերը:

Գագարինում ներկայումս գործող միակ արդյունաբերական ձեռնարկությունը զբաղվում է գազի կոմպրեսորների արտադրությամբ: Այն տեղակայված է նախկին լուսատեխնիկական գործարանի շենքում: Բացվել է Ռուսաստանում բնակվող արմատներով Լճաշենցի Ահարոն Տեր-Գրիգորյանի կողմից 2000թ.-ի կեսերին: Արտադրանքը արտահանում են Ռուսաստանի դաշնություն: Ըստ գյուղացիների, մոտ 30-40 մասնագետ են աշխատում գործարանում համեմատաբար բարձր վարձատրությամբ: Այս գործարանի արտադրանքը սպառող ընկերություններից են «Լուկոյլն» ու «Ռոսնեֆտը»:

Նոր Գործարանն ու իր մարդիկ

Ընդմիջումը նոր էր ավարտվել, երբ մտանք Գագարինավանի շինարարական խոշոր մեքենաների նորոգման գործարան: Բանվորները տեղեր են գրավում հաստոցների շուրջ: Հսկա արտադրամասը խոր աղմկում է:

Գործարանի կուսակցական կազմակերպության քարտուղար Նիկոլայ Վարդանյանը մեզ ծանոթացնում է մասնաշենքի հարմարություններին: Բազմահարկ այդ կառույցը թեև անցյալ տարի է շահագործման հանձնվել, բայց դեռևս լրիվ կարողությամբ չի աշխատում:Տարեկան 3,5 միլիոն ռուբլու արտադրանք տալու համար այստեղ պետք է տեղադրվեն նոր սարքավորումներ ու բանվորների թիվը հասցվի 500-ի:

Գործարանի գլ խավոր մասնաշենքի աստիճաններով բարձրանում ենք 2-րդ հարկ: Այստեղից լայն միջանցքը ձգվում է դեպի նորոգման արտադրամաս, որի բարձրությունը 15մետր է, իսկ արտադրական մակերեսը՝ 9300 քառակուսի մետր: Հզոր<<Մ-100>> մակնիշի տրակտորները և տարբեր էքսկավատորները ազատ են և մուտք են անում այստեղ: Դրանք նորոգված մեքենաներ են, որոնք փորձարկվում են գործարանում: Այս արտադրամասը հունվար ամսվա իր առաջադրանքները կատարել է 123 տոկոսով:

Բարձր ցուցանիշներով են աշխատում նաև մեխանիկական արտադրամասի բանվորները: Նրանք բոլորն էլ երիտասարդներ են և գործարան են եկել նրա գործարկման առաջին օրվանից:

Արտադրամասի պետ, 26-ամյա Սուրեն Թադևոսյանը մեզ ծանոթացնում է բանվորների հետ: Նրանցից ամեն մեկը աշխատանքի մեջ յուրովի է աչքի ընկնում: Ահա երիտասարդ խառատ Լյովա Մուշեղյանը: Նա օրվա իր առաջադրանքները կատարում է 105-110 տոկոսով և մշտական տալիս է բարձրորակ արտադրանք: Իր լավ աշխատանքի շնորհիվ արտադրամասը հունվար ամսին պլանով նախատեսված 11 հազարի փոխարեն, թողարկել է 14 հազար ռուբլու արտադրանք:

Գագարինավանի շինարարական խոշոր մեքենաների վերանորոգման գործարանի հիմնադիր բանվորներից է մեխանիկական արտադրամասի շնորհալի խառատ Ալեքսանդր Կորոլյովը:Ի պատիվ ՍՄԿԿ 24-րդ համագումարի, նա պարտավորվել է ընթացիկ տարվա առաջին եռամսյակի իր առաջադրանքները կատարել մարտի 25-ին: Ստանձնած պարտավորությունները անթերի կատարելու համար է, որ Ալեքսանդրը այս օրերին իր պլանները սիստեմատիկաբար գերակատարում է:

Նկարում.-Ա. Կորոլյովը աշխատանքի ժամին:

<< Հայէլեկտրալույս>> միավորման Գագարինավանի մասնաճյուղի լյումինիսցենտային լամպերի կոթառների արտադրության տեղամասում գործարկվեց օդաճնշման նոր սարք, որի շնորհիվ աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է մոտ 3 անգամ:

Նկարում.- Բանվորուհի Օֆիկ Եղիազարյանը օդաճնշման նոր սարքի միջոցով դուրգամում է լյումինիսցենտային լամպերի կոթառների կափարիչները:

Կրթությունը

1957թ. Բանավանի բնակչությունը հասավ 204-ի: Դպրոցի առաջին տնօրեն նշանակվեց Գագիկ Եղիազարյանը: Առաջին աշակերտները եղան Աշոտ Վանուշի Աբգարյանը, Էյովա Ժորայի Հակոբյանը, Գոհար Թեմուրի Պողոսյանը, Լեոնիդ Սերյոժայի Խաչատրյանը, Հասմիկ և Ռուբիկ Օհանյանները, Սուրիկ Համբարձումյանը և ուրիշներ:

Դպրոցը միջնակարգ է դարձել 1984թ.-ին՝ երբ շահագործման հանձնվեց նոր մասնաշենքը:

Գագարինն ու իր մարդիկ

Գագիկ Եղիազարյան

Ծնունդով Դդմաշենից է, բայց իրեն գագարինցի է համարում: Նրա հետպատերզամյան կենսագրությունը այս հող ու ջրի, այս բնակելիների, ձեռնարկությունների կենսագրությունն է: Նա դպրոցի տնօրեն էր հիմնադրման պահից: Եվ պատահական չէ, որ Գագարին ավանի ու Գագիկ Եղիազարյանի կենսագրությունները հնարավոր չէ առանձնացնել:

Գագարինում այսօր լիաթոք շնչող միակ օջախը դպրոցն է, թեև ասվածը մի քիչ հարաբերական է: Գյուղի հոգսերն ու ցավերն այստեղ էլ զգացնել են տալիս ու դրան իրենց մեջ են ներառել երկարամյա ու վաստակաշատ տնօրենին:

Նախկինում Գագարինի դպրոցը 558 աշակերտ է ունեցել, հիմա մնացել է 280-ը, 24 դասարանից 13-ը: Ընդամենը մի քանի տարի առաջ 3 առաջին դասարան ունեինք , այսօր մնացել է մեկը,- հոգոց հանելով ասում է տնօրենը:

-Գիտեք ինչ տանջանքների գնով հասանք այն բանին, որ 8-ամյա դպրոցը միջնակարգի վերածվի,- ասում է կյանք տեսած, պատերազմի բովով անցած Գագիկ Եղիազարյանը և ավելացնում,- ավանի բնակչության թիվն անընդհատ ավելանում էր, մեկը մյուսի ետևից դասարաններ էին բացում: 38 ուսուցիչ ունեինք, բայց էլի պակաս էինք զգում, հիմա 23-ն են մնացել: Չնայած դժվարություններին, հոգսերին դպրոցը շնչում է, շնչում է իր բազմավաստակ տնօրենի շնորհիվ:

-10 տարի շարունակ ոչ մի լումա չի տրամադրվել դպրոցի վերանորոգմանը,- ասում է նա – ինչ արվում է, արվում է մեր ուժերով:

-Իրոք հպարտանալու շատ բան ունեն տնօրենը, ուսուցիչները: Դպրոցական նստարան- աթոռները ասես նոր ստացված լինեն: Աչքի լույսի պես պահապնվել է ամեն ինչ, նույնիսկ 20-30 տարվա վաղեմություն ունեցող դաշնամուրը, հեռուստացույցները, քարտեզները: Ո՞ր մեկը թվարկես…

Ակամայից զարմանում ես , որքան եռանդ, նվիրվածություն այս մարդու մեջ, որ կարողացել է դպրոցի, նրա գույքի նկատմամբ տիրոջ պատասխանատվություն ներարկել ուսուցիչներին, աշակերտներին: Պարզապես նա շատ է պահանջկոտ: Պահանջկոտ է առաջին հերթին իր, հետո ուիշների նկատմամբ:

Ուրիշ էլ ով, եթե ոչ նա պետք է ներկայացնի ավանի անցած-գնացած օրերը, նրա պատմությունը:

Առիթ կար,- ասում է նա: Հավաքվեցինք իմ կաբինետում:Առաջարկությունը ես արեցի: 1961 թվականի ապրիլի 15-ին դպրոցի, հասարակական կազմակերպությունների միացյալ ժողովը որոշեց Բանավանը կոչել 1-ին տիեզերագնացի անունով և դիմեցինք ՀԿԿ Սևանի շրջկոմին և շրջսովետին:

Սեվանի շրջանի
Գագարինավանի
8~ամյա դպրոցի
Շրջանավարտներ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Գ.
ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ.
ՇԻԿՈՒՅԱՆ Ս.
ՄԱՐԳԱՐՅԱՆ Գ.
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Լ.

Սեվանի երգչի գագարինավանի
ուրբաթյան դպրոցի
շրջանավարտները
1971
1972 թ.


1980~ 1981 ՈՒՍ.Տ.
Gagarin Avan

Գագիկ Եղիազարյանը մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին և 2015 թվականին պատերազմի 70-ամյակի առթիվ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի կողմից պարգևատրվել է մեդալով:

Տոնածառի զարդարանքների գործարանը

Զմեռային առավոտը միանգամից է բացվում փոքրիկ հարթության վրա փռված Բանավանում: Ու լուսաբացի հետ Գագարինավանի փողոցներով փութաջան քայլերով աշխատանքի են շտապում 800 բանվորներ: Նրանց ոտնահետքերը ճյուղավորվում են դեպի ավանի տարբեր կողմերը, ուր խտանում են, համատարած ձյան վրա բազմաթիվ ճամփաներ են բացվում, որոնք տանում են դեպի երիտասարդ ավանի արդյունաբերական ձեռնարկությունները:

Գործարանի թողարկած ալյումինիսցենտային լամպերի և թողարկիչների ֆենոպլաստինե գեղեցիկ կոթառները լայն ճանաչում էին գտել հանրապետությունում: Այն իր արտադրանքը առաքում էր ոչ միայն մեր Միության տարբեր քաղաքներ, այլև արտասահմանյան շատ երկրներ՝ Չեխոսլովակիա, Իրաք, և այլն:

-Այժմ մեր բանվորները թողարկում են նաև “Ժիգուլի” ավտոմեքենաների լուսարձակների կոթառներ,- ասում էր գործարանի տնօրեն Սեդրակ Կարապետյանը: Այստեղ առաջին անգամ մշակվում էր նոր լուսամփոփների արտադրության տեխնոլոգիան: Դրանք պատրաստվել են հիմնականում բյուրեղապակուց և գունավոր ապակուց: Համար 81 մեքենայացված շարժական շարասյան բանվորնորի ուժերով այստեղ կատարվել էր 40 հազար ռուբլու շինարարական աշխատանք:

Գործարանի կոլեկտիվը շարունակ գերակատարում էր իր առաջադրանքները: 1971թ հունվար ամսվա աշխատանքը կատարվել էր 110 տոկոսով: Սակայն տոկոսներից զատ այն ուներ ավելի հրապուրիչ ցուցանիշ՝ գործարանում աճում, որակավորվում էր բանվորական հիանալի կորիզ: Գործարանի աշխատողները իրենց ամսեկան առաջադրանքները կատարում էին 110-115 տոկոսով:

1970 թվականի 4-րդ եռամսյակի մրցության հաղթող ճանաչվեց տոնածառի զարդարանքների գործարանը՝ ստանալով “Առաջավոր ձեռնարկություն” փոխանցիկ դրոշը:

Կուլտուրայի տան աշխատանքը՝ համատեղության կարգով

Գազարինավանի կուլտուրայի տան գրադարանի վարիչ Զիրավարդ Դանիելյանը ընթերցասրահում, ինքնաշեն էլեկտրավառարանի մոտ նստած ոտքերն է տաքացնում:Ներսում համարյա շոգ է: Մոտ մեկ մետրանոց ազրեստի խողովակի վրա փաթաթված գալարները լրիվ շիկացել են: Բարձր ջերմությունից վառարանի տակ մանրահատակը քանդվել է և ձյութը հալվելով, ապականել է շուրջը:

Ձանձրույթից հորանջելով, Զիրավարդը մեզ տեղ է առաջարկում վառարանի մոտ և սկսում է տրտնջալ.

_Էս վառարանն էլ, որ չլինի՝ մեզ ցուրտը կտանի, ոչ ջեռուցումն է աշխատում, ոչ էլ այդ մասին մտահոգվող կա:

Իրոք ցրտի պատճառով արդեն3-4 ամիս է, ինչ ակումբում կինո չի ցուցադրվում: Սակայն տխրությունը միայն դա չէ:

Էլեկտրավառարանի պատճառած ավերվածությունից բացի այստեղ տարբեր ժամանակներում ջարդվել են մի քանի աթոռներ, նստարաններ, փչացել են դաշնամուրի ոտները: Արդեն 2 ամիս է, շենքի հատակը չի լվացվել:

Ակումբում երկար ժամանակ է, որ ոչ մի միջոցառում չի անցկացվում: Չկա ոչ մի պլակատ, տեմպերի տախտակ և այլն:

Անցած ամսին ես ավանային սեվետի գործկոմի նախագահի հետ մի փոքր վիճել էի, դրա համար համարյա ոչինչ չենք արել,-խոստովանում է Զիրավարդը:

Ցանկացանք ծանոթանալ փետրվար ամսվա միջոցառումների պլանին:Գրադարանավարուհին երկար փնտրեց, քրքրեց գրասեղանի դզրոցները, բայց այնպես էլ պլանը չգտավ:

Երևի թողել եմ տանը,-վերջում ասաց նա:

Պատկերը նույնն է նաև ակումբում: Սակայն այստեղ մենք չկարողացանք լրիվ ծանոթանալ գործերի վիճակին, քանի որ ակումբի վարիչ Յուրիկ Սահակյանը տեղում չէր:

Պարզվում է, որ սովորում է Սևանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկումում և ամբողջ օրը զբաղված է իր դասերով:

Կուլտուրայի տան աշխատանքը երկրորդ գործ է համարում նաև գրադարանավարուհի Զիրվարդ Դանիելյանը: Նրա հիմնական աշխատատեղին երկաթգծի կայարանն է, ուր 50 ռուբլի աշխատավարձով որպես կշռավար է ձևակերպած: Այստեղից հասկանալի է, թե Զիրավարդը ինչպես է աշխատում գրադարանում: Պարզապես նա այստեղ է գալիս միայն աշխատանքի ազատ ժամերին: Ահա շուջ 900 բնակչի սպասարկող մշակույթի տան ամբողջ աշխատանքը, որի համար շրջանային կուլտուրայի բաժինը աշխատավարձ է վճարում նրա աշխատողներին:

Մանկապարտեզը չի գոհացնում

Ավանն ունի իր մսուր-մանկապարտեզը, ուր 25 երեխաների խնամքն ու դաստիարակությունը հանձնարարված է վարիչ Մելոիդա Սահակյանինև դաստիարակուհի Աիդա Փանոսյանին, երկուսն էլ ձեռներեց աշխատողներ են: Բայց հենց առաջին հանդիպումից մսուր-մանկապարտեզի առօրյան չգոհացրեց մեզ:

Այստեղ երեխաների սննդամթերքը միշտ նույնն է, կաթնամթերքը ստացված է սահմանափակ չափով, իսկ թխվածք ընդհանրապես չկա: Ավելի վատն այն է, որ այդ հիմնարկությունը ավելի քան 20 օր զրկված է ջրից, այն դույլերով բերվում է դպրոցի շենքից: Չեն աշխատում սանհանգույցները:

Այստեղ հարկի չէ նաև սանիտարական վիճակը, ժամանակին չեն լվացվում ու փոխվում անկողինները, կեղտոտ է շենքի հատակը: Բավարար ուշադրություն չի դարձվում նաև զույքի, խաղալիքների պահպանությանը: Մի թե դա չէ պատճառը, որ միայն անցած տարում ակտավորվել ու դուրս է գրվել 170 ռուբլու խաղալիք:

Սևանի շրջ. Գագարինավանի
միջնակարգ-մանկապարտեզի
1981 1982 ուս. տ.
Ամենի գրքույկ

Նաև առևտրի մասին

Ավանի բնակիչների հոգսերից մեկն էլ արդյունաբերական, պարենային ապրանքների խանութի դեռևս ոչ բավարար սպասարկումն է: Պարենային ապրանքների խանութում հացը ստացվում է ուշացումներով, քիչ է պատահում, որ գազարինավանցին նույն օրը թարմ հաց գնի խանութից:

Թե խանութում, թե ճաշարանում խիստ նեղվածք են ստեղծել ամիսներով կուտակված դատարկ շշերով լի արկղերը, որոնց արժեքը անցնում է 1000 ռուբլուց:

Վերակառուցվել է բազայի աշխատանքը

Հեղուկ գազի Սևանի փնջային բազայում աշխույժ եռուզեռ է: Բակում ավտոմեքենաները բեռնավորվում են գազաբալոններով:

Մարդիկ շտապում են: Աշխատանքային օրվա ավարտից շատ քիչ ժամանակ է մնացել, պետք է ճանապարհել մարդկանց, հեռու շրջաններից են եկել:

Մենք հանդիպեցինք լիցքավորման արտադրամասի օպերատորներ Մարգարիտ Մանուկյանին, Արև Մկրտչյանին, Ալվարդ Բաղալյանին և Լիդա Գրիգորյանին: Բանվորուհիների այդ քառյակը աշխատանքում միշտ անբաժան են միմյանցից: Նրանք անբաժան են մնացել նաև բազայի <<պատվոտախտակում>>: Երիտասարդ օպերատորները հունվար ամսին, նախատեսված 275-ի փոխարեն, լիցքավորել են 276 տոննա գազ: Բազան սպառողներին է ուղարկել 124.6 տոննա գազ:

Մտնում ենք բազայի պետի առանձնասենյակը: Այստեղ է նաև <<Սոյուզ գազ>> տրեստի հայկական գրասենյակի պետ Ա. Գրիգորյանը: Նա իր դիտումների տպավորության տակ զոհունակությամբ խոսում է այս կազմակերպության մասին, որտեղ վերջին մեկ տարում զգալի փոփոխություններ են կատարվել: Նորոգվել են բոլոր արտադրամասերը, սարքավորումները, ձեռք են բերվել նոր մեքենաներ: Միայն նորոգումների վրա ծախսվել է շուրջ 52 հազար ռուբլի: Այդ ամենի շնորհիվ այստեղ բարձր հիմքերի վրա է դրվել սպասարկման գործը:

Իրոք, այդ բանը իրենց զգացնել է տվել ամեն մի քայլափոխում: Այդ մասին է պատմում նաև այդ օրը լույս տեսած բազայի <<Երկնագույն ջահ>> պատի թերթը:

Կամո Սարգսյան- 1996-2002թթ աշխատել է Սևանի քաղաքապետարանի Գագարինավանի տարածքային բաժնի վարիչ:Այնուհետև աշխատել է Գագարինավանի Պահուստ ՊՈԱԿ-ում (որը հիմնադրվել է 1984թ-ին)որպես կապի սարքավորումների գծով ճարտարագետ մինչև 2017 թ, որից հետո նշանակվել է տեղամասի պետ, և մինչև օրս աշխատում է այստեղ,որը, ցավոք լուծարման փուլում է:

Այստեղ են գտնվել հանրապետության գաղտնի պահեստները՝ պետական ռեզերվով:Գագարինը ունեցել է նաև ավանային խորհուրդ, որի դեպուտատներ են եղել Բենո Խաչատրյանը, Անտոնյան Քաջիկ և ինքը ՝ Կամո Սարգսյանը:

Նա նշեց, որ մինչև 1961թ կոչվել է Բանավան, իսկ 1961թ ապրիլից կոչվել է Գագարինավան: 1958թ-ին հիմնադրվել է դպրոցը, որի հիմնադիրը և առաջին տնօրենը եղել է Գագիկ Եղիազարյանը: Սկզբում դպրոցը եղել է գիշերօթիկ, հետո 8-ամյա,իսկ 1984-1985թթ միջնակարգ;1960-1970-ական Ավանը ունեցել է ակումբ, որտեղ կազմակերպվում էր ֆիլմերի դիտում, գործում էին պարի, նկարչության խմբակներ, գործում էր նաև գրադարանը:

2019-2020թթ վերանորոգվել է և կոչվել է մշակույթի պալատ: Ունեցել է նաև երկու մանկապարտեզ, առաջինը հիմնադրվել է 1967-1968թթ, իսկ երկրորդը՝ 1980-ական թվականներին: Հիմա գործում է մեկը, որի վարիչը երկար տարիներ եղել է Ժենյա Գրիգորյանը:

Առաջին շենքերը կառուցվել են 1956 թվականին և սկսել են բնակեցնել: Առաջի շենքը եղել է Գայի փողոցի 3-րդ շենքը:Առաջի բնակիչը եղել է Համբարձումյան Զարմո Բեյբութի, հետո տղան Մանվել Զարմոյի Համբարձումյան:

1970-ական թվականներին հիմնադրվել է շինարարական խոշոր մեքենաների վերանորոգման գործարանը, որտեղ վերանորոգում էին էքսկավատորներ, աշխատում է շուրջ 220 հոգի: Գործում էր նաև հեղուկ գազի փնջային բազան, սառցակոմբինատը, հայ- գյուղ քիմիա Գագարինի բազան, հայ-գյուղ տեխնիկա, նավթամթերքների պահեստների կոմբինատը նավթի բազան, թռչնաֆաբրիկան.
-1960-ական թ. հիմնադրվել է լուսատեխնիկականապակու գործարանը, որը սկզբում տոնածառի խաղալիքներ է արտադրել, իսկ հետագայում բյուեղապակյա զարդեր: Գագարինն ունեցել է նաև ֆուտբոլային թիմ, որը հաճախակի հանդես էր գալիս տարբեր քաղաքներում:

Կամո Սարգսյանը իր խոսքում նշեց, որ խորհրդային տարիներին Գագարինը ունեցել է 14 արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկություն:

<u>Հովհաննիսյան Գոհար</u>-ծնվել է 1957թ., 1982-ից աշխատել է «Գագարինավանի Լուսատեխնիկական ապակու գործարանում», խաղալիքների բաժնում որպես խաղալիք պատրաստող:

-Ընդունվել եմ որպես աշակերտ, շատ արագ սովորեցի և 100ից դարձա վարպետ: Ավտոբուսը անվճար բոլոր աշակերտներին տանում և բերում էր: Ապակյա ձողից ստանում էինք մեծ խաղալիքներ, գազի վրա տաքացնում էինք ապակին, ստանում էինք հեղուկ և դրանից պատրաստում կլոր տոնածառի խաղալիքներ: Ֆորմաները հագցնում էինք ապակիների վրա, ապակին հալվում էր, լցվում էր ֆորմայի մեջ, հետո տեղափոխում էինք սառը տեղ և ստացված խաղալիքները հանում էինք միջից, ուղարկում էինք հատուկ արտադրամաս, որտեղ գունավորում էին և վրձնով վրան նկարում: Խաղալիքները նույնիսկ արտահանում էին Ռուսաստան: Նոր տարվա առթիվ աշխատողներին ամանորյա նվերների փոխարեն տալիս էին խաղալիքներ: Վարձատրությունը գործարքային էր, կատարվում էր ըստ խաղալիքների թվի: Աշխատավարձի ստանալու օրը կոլեկտիվով գումար էինք դնում և միասին հավաքվում:
Պարտադիր նշում էինք մարտի 8, մայիսի 1, մայիսի 9, Նոր տարի: Օգտվում էինք գյուղի մթերային խանութից: Եթե ընդհանուր արտադրամասը պլանը կատարում էր, ընդհանուր գումար էին տալիս որպես խրախուսանք, մենք էլ հավասար բաժանում էինք: Մի գեղեցիկ սովորություն կար.- ամեն ամիս դրամային խաղարկություն (լատարե) էինք խաղում և դրանով տան գույք գնում:

Թադյոսյան Հասմիկ-ծնված 1969թվականին, 1989-1996թվականներին աշխատել է Գագարինավանի միջնակարգ դպրոցում՝որպես դասվար:

-Դպրոցի տնօրենը Գագիկ Եղիազարյանն էր: Նրանից շատ բան էր կախված, երբեմն դպրոցում շատ գործեր ինքն իր ձեռքերով էր կատարում՝ վերանորոգում, հատուկ խնամքով էր վերաբերում և՛դպրոցական շենքին, և՛ հարգանքով՝ բոլոր աշակերտներին:

Երբ արդեն գազ չկար, տաքացնելու հնարավորություն էլ չկար, շատ բնակիչներ իրենց բնակարանների տաք սենյակները տրամադրում էին առաջին դասարանցիներին՝ դասերն այնտեղ անցկացնելու համար, որպեսզի ուսուցումը չտուժեր:

Այդ տարիներին դպրոցն ուներ այգի, որը մշակում էին երեխաները, իսկ ճաշարանում՝սեղանների վրա դրված էր հավաքած բերքը: Երեխաներն օգտվում էին դրանից: Խորհրդային կարգերի փլուզումից հետո դա արդեն դարձավ հիշողություն:

Սևանից կար մոտ ինն երթևեկող ուսուցիչ, բայց փլուզումից հետո տրանսպորտի վիճակը վատացավ: Գործարանների ավտոբուսները սիրով էին տեղափոխում ուսուցիչներին, մենք գնալուց գործարաններին տրամադրվող ավտոբուսով էրինք գնում, բայց քանի որ հետ գալու ժամերը չէին համընկնում, ոտքով էինք գալիս Սևան:

Չնայած դժվարություններին ուսուցիչներով չէինք դժգոհում, մտածելով՝ ամեն ինչ լավ է լինելու:

Գագարինավանում տարբեր բնակավայրերից էին բնակիչները եկել, և բոլորն արդեն շատ համերաշխ էին, սիրով էին շփվում միմյանց հետ: Ավանի բնակիչները յուրահատուկ ձևով էին հարգում ուսուցիչներին, այդ հարգանքը շատ ակնառու էր:

Գործարանային քաղաք էր Ավանը, սակայն աշակերտները տեսնում էին, որ բանվորները ավելի բարձր էին վարձատրվում, քան ուսուցիչները, ինձ թվում է այդ ժամանակվանից սկսեցին կրթության նկատմամբ անտարբերություն դրսևորվել, և դա գնալով խորացավ: Գագարինավանում ավելի շուտ հասկացան, որ ավելի լավ է որևէ արհեստ սովորել կամ զբաղվել բիզնեսով, քան դառնալ ուսուցիչ՝ կապված ժամանակների հետ: :

Գագարինավանի հիմնարկ-ձեռնարկություններում, կազմակերպություններում աշխատողների թվաքանակը:

Հ/Հ	Հիմնարկ-ձեռնարկության կազմակերպության անվանումը	Ընդհամենը	Այդ թվում Գագարին ազգաբնակչություն
1	2	3	4
1.	Լուսատեխնիկական ապակու գործարան	753	260
2.	ՇԽՄՎ գործարան	187	47
3.	Սառցակոմբինատ	162	24
4.	Նավթի բազա	162	4
5.	Հայգյուղ քիմիա	160	23
6.	Նյութամատակարարման բազա	61	10
7.	ՆՈ 20 ՇՄՇ	161	-
8.	ՆՈ 4 ՇՄՇ	120	4
9.	Հեղուկ գազի լիցքավորման բազա	31	8
10.	Երկրորդական հումքի բազա	26	7
11.	Մարտունու նո. 7 բազա	9	3
12.	ՀԽՍՀ կապի մինիստրություն	5	-
13.	Թռչնաբուծական ֆաբրիկա	288	25
14.	Բնակչության կոմունալ տնտեսության վարչություն	87	46
15.	Ծաղկունք երկաթգծի կայարան	30	20
16.	Միջնակարգ դպրոց	36	19
17.	Նո. 1 մսուր-մանկապարտեզ	21	17
18.	ԳԼԱԳԻ-մսուր-մանկապարտեզ	30	22
19.	Երաժշտական դպրոց	27	2

Հռոմսիմ Անտոնյան

Ժողովրդական խոսք է. <<Անտառը գեղեցիկ է իր հաստաբուն ծառերով, իսկ կյանքը՝ տարեց մարդկանցով>>: Գազարինն էլ ունեցել է իր կաղնին, հաստաբուն ծառը Հռոմսիմ Անտոնյան կամ պարզապես Հռոմ տատ: Խոր ծերության մեջ հիշում էր այն երանելի օրը: Փոքրիկ աղջնակ էր, այցելության էր գնացել վարսավիր հորը: Այդ պահին վարսավիրանոց մտավ Անդրանիկ զորավարը: Տարիներ շարունակ նա աչքի լույսի պես պահում- պահպանում էր զորավարի կողմից իրեն նվիրած վզնոցը:

Օրը ծանր էր, ապրելը՝ հոգնեցուցիչ:Բայց 104 ամյա Հռոմ տատը անսահման լավատեսությամբ է լցված կյանքի, ապրելու նկատմամբ ու իր տարիների ծանրությամբ ոտքը ամուր դրել է այս հողին և նույնն է պատգամում սերունդներին .

Երբեք հայրենի հողը չլքեք, ապրեք հույսով ու հավատով, ինչպես զորավարն էր ասում...

2019 թվականին Գագարինավանում հիմք դրվեց եկեղեցու շինարարությանը:Ավանի բնակիչ Դավիթ Գալստյանի հովանավորությամբ, որն արդեն 1980-ական թվականներից բնակվում է Սանկտ Պետերբուրգում, սկսվեց եկեղեցու շինարարությունը:Շինարարներ Սասուն Վարդանյանի, Արսենի, Նարեկի, Ռուբիկի և Արմանի ձեռքերով կառուցվեց եկեղեցին, որը կոչվեց Սուրբ Խաչ: Եկեղեցու շինարարությունը ավարտվեց 2021 թվականին:

Դավիթ Գալստյանի

Այսօր

Գազարինը, գազարինցին այս հող ու ջրի մի մասնիկն են: Եթե դժվար է հայի օրը, նույնքան ծանր է գազարինցու վիճակը: Ավանը կառուցվել է որպես արդյունաբերական հանգույց: Անցումային կոչվող ժամանակաշրջանը, որ բզկտեց երկիրը, ծնվեն- ծնվեն արեց ժողովրդի տարիների հարստությունը , իր մեջ առավ նաև Գազարինը: Գազարինցին այսօր աշխատանք չունի, Գազարինցու օրը դարձել է մռայլ ու դժգույն: Չեն աշխատում երբեմնի արդյունաբերական ձեռնարկությունները: Տան տղամարդը, որ կոչված է տուն պահել, տուն կերակրել, իր օրն անցկացնում է պարապ-սարապ:

Արտագաղթ է...

Վաղվա օրը

Լուսավոր է, քանզի գազարինցին կյանքի նկատմաբ միշտ լավատես է եղել ու հավատով սպասում է, որ զարուններ դեռ կգան իր հողում, ծաղկուն զարուններ, ու կյանքն այստեղ ծաղկաշատ կլինի, ապրելը՝ նույնքան հեշտ:

Պապ Հայրապետյան

/ Սևան թերթի խմբագիր/

Կառավարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ՝Գագարին ներդրումային ծրագրի վրա աշխատելու համար:

Կարծում ենք, որ եթե այս նախագիծը կյանքի կոչվի, Գագարինավանի վրա լույս կճառագի, և այն կդառնա նույն բարեկեցիկ Ավանը, ինչպիսին էր խորհրդային տարիներին: